ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ԲԱՄԲԱԿԻ
# ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
# ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

633.5
Հ-22

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ 1931 Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ



28 FEB 2013
19.188
633.5
Հ-22
24 SEP 2

պ. Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ., հրատ. „Զարյա Վոստոկա"-ի, Ռուս. 33
Պատվեր 1074. Գլավլիտ 975. Քանակ 3.000.

# ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ ԱՆԴՐՑԵՐԿԿՈՄԻ 1931 Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

I

Անդրկովկասի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում ձեռք բերած նվաճումները—մինչև 1931 թ. մայիսի 1-ն Անդրկ-վկասում միջին թվով կոլեկտիվացման է յենթարկված տնտեսությունների 34 տոկոսը, իսկ բամբակի ռայոններում՝ 48 տոկ. մեքենա-տրակտորային կայաններն հիմնականում ընդգրկել են բամբակի ամբողջ տարածությունը, լայն տարածում է գտել շարքացանն ու տրակտորային մշակումը, վորոշ չափով կանոնավորված է ջրատնտեսությունը և այլն—ստեղծում են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ բամբակի հետագա բերքատվությունը զգալիորեն բարձրացնելու համար։

Ընթացիկ տարում Ադրբեջանում բամբակի բերքատվությունը 1930 թ. մեկ հեկտարից ստացած 4,4 ցենտներից հասցնելու յենք միջին թվով 8,5 ցենտների. 1931 թվին Հայաստանում՝ 8,0 ցենտ. մինչև 11,0 ցենտ., Վրաստանում՝ 3,3 ցենտ. մինչև 7,7 ցենտ.։ Այսպիսով բամբակի բերքատվությունն այս տարի Ադրբեջանում ու Հայաստանում մինչպատերազմյան մակարդակից բարձր է լինելու։

Անդրյերկկոմը մատնանշում է, վոր մի շարք կուսակցական ու խորհրդային կազմակերպություններ մինչև օրս իրենց համար լրիվ չափով չեն պարզել բամբակի բերքատվության բարձրացման տնտեսական

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библ.
ՀՍՍՌ-Арм ССР



(13873-58)

քաղաքական նշանակությունը և բոլշևիկյան մարտական կազմակերպչական աշխատանք չեն ծավալել կոլխոզնիկներին ու անհատական չքավոր ու միջակ տնտեսներին բամբակի բերքատվության բարձրացման բնագավառում մոբիլիզացիայի յենթարկելու համար:

Հաշվի առնելով բամբակի կամպանիայի ընթացքում նկատվող մի շարք թերություններ, վորոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ բամբակի բերքատվության բարձրացման գործում (ջրելու, աշնանավարի, տրակտ. մշակման պլանների չիրականացնելը, մի շարք տեղերում շարքացանի վոչ լրիվ չիրացնելը), ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Ե ԲԱՄԲԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ, ՎՈՐՊԵՍԶԻ ԿԱՐԵԼԻ ԼԻՆԻ ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՎՈՐԱԿ ՈՒ ՏԵՄՊԵՐ, ՎՈՐՈՆՔ ԿԱՊԱՀՈՎԵՆ ԱՅԴ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ԼՐԻՎ ԻՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ:

II

1) Նկատի առնելով, վոր մշակման կամպանիայի գործադրման խնդրում ամենասուր հարցը հանդիսանում է ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՀԱՐՑԸ և հաշվի առնելով, վոր անցյալ տարի մշակման շրջանում բանվորական ուժն օգտագործվել է անբավարար չափով, Անդրյերկկոմն առաջարկում է բամբակի ռայոնների բոլոր կուսակցական կազմակերպություններին իրենց ուշադրության կենտրոնում դնել մշակման կամպանիայում կոլխոզների և անհատական տնտեսությունների ամբողջ բանվորական ուժը լրիվ օգտագործելու խնդիրը:

Այդ միանգամայն լուրջ խնդիրն աջող կերպով լուծելու համար, կոլխոզներում պիտի ԼՐԻՎ ԿԵՐՊՈՎ ԳՈՐԾԱԴՐՎԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ. 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ—ԿՏՈՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ (ՍԴԵԼՇՉԻՆԱ) ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ գործադրելու, արտադրանքի ճիշտ նորմաներ հաստատելու, կոլխոզներում աշխատանքի կազմակերպումն արմատապես բարելավելու և կանոնավորելու, յեկամուտների հավասար բաշխումը վերացնելու և «ով շատ և լավ է աշխատում, նա շատ է ստանում, ով չի աշխատում— նա վոչինչ չի ստանում» սկզբունքը խիստ կերպով պահպանելու մասին:

Լայն մասսայական աշխատանք ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը՝ իբր աշխատանքի արտադրականության բարձրացման հզոր միջոց՝ կոլխոզների և անհատական տնտեսությունների միջև տարածելու, ինչպես և անհատական չքավոր—միջակ տնտեսությունների միջև բամբակի մշակման հասարակական ձևերին զարկ տալու ուղղությամբ (մշակելու համար խմբերով դաշտ դուրս գալ. բրիգադներ կազմակերպել և այլն):

Այս միջոցառումների իրականացումը հիմնականում կարող է և պետք է ապահովի մշակման կամպանիայի շրջանում Անդրկովկասի բամբակի ռայոնները գոյություն ունեցող բանվորական ուժով:

2) Սակայն, Անդրյերկկոմը մատնանշում է, վոր հանրապետական և ռայոնական կուսկազմակերպությունները խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները իրականացնելու համար դեռ շատ թույլ աշխատանք են ծավալել, շատ դանդաղ են տանում սդելշչինան, աշխատանքի կազմակերպման բրիգադային մեթոդի, աշխատանքի հաշվառքի գործնական խնդիրները կոլխոզներում ծավալելու աշխատանքը, մի շարք դեպքերում թերագնահատվում է կուլակի դիմադրությունը համագումարի վորոշումները գործնականում իրականացնելում, վորով և վտանգ է ստեղծվում բամբակի բերքատվության բարձրացման առաջադրության
կի բերքատվության բարձրացման առաջադրությունն իրականացնելու համար:

*Անդրյերկկոմն առանձնապես ընդգծում է, վոր մի շարք կազմակերպություններ, վորոնց հանձնարարված է իրականացնել Համկոմկուսի Կենտկոմի և Անդրյերկկոմի՝ բամբակի վերաբերյալ վորոշումները, մինչև օրըս չեն ապահովել այդ դիրեկտիվների ճշտիվ իրականացումը:*

*Ադրբեջանի Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը բամբակի կոլխոզներում սահմանել են արտադրության այնպիսի նորմաներ, վորոնք վոչ միայն խթան չեն հանդիսանում, այլ և խափանում են աշխատանքի արտադրողականության բարձրացումը կոլխոզներում, արհեստականորեն ստեղծելով բանվորական ուժի պակաս: Ադրբեջանի Կոլխոզկենտրոնը սահմանել է աշխատանքների առանձին տեսակների գնահատման այնպիսի նորմաներ բամբակի կոլխոզներում* 1931 *թ. համար, վորոնք վոչ միայն չեն նպաստում բանվորական ուժի անմիջական օգտագործմանը բամբակի դաշտերում, այլ և խրախուսում են բամբակի մշակման լարված աշխատանքի ժամանակ բանվորական ուժի հեռացումը դեպի ուրիշ մշակույթներ:* Անդրհողժողկոմատը և Անդրկոլխոզկենտրոնը ժամանակին ձեռք չեն առել անհրաժեշտ միջոցներ այդ ամենակոպիտ աջ օպորտունիստական սխալները ուղղելու համար:

*Մինչև վերջին ժամանակներս վոչ Անդրկոլխոզկենտրոնը, վոչ էլ հանրապետական կոլխոզկենտրոններից վորևէ մեկը չեն տվել կոլխոզային սիստեմին ցուցմունքներ դրամական և հացի կանխավճարները կոլխոզների ներսում բաժանելու մասին, վորի պատճառով մի շարք կոլխոզներում այդ ավանսները բաժանվել են տնտեսությունների միջև հավասար կերպով և վոչ թե ամեն մի կոլխոզնիկի կողմից կատարած աշխատանքի քանակի և վորակի համեմատ:*

*Անդրյերկկոմն առաջարկում է հանրապետությունների Կենտկոմներին, Անդրբամբակկոմին, Անդրկոլխոզկենտրոնին և Անդրհողժողկոմատին անմիջապես վերանայել բոլոր ցուցմունքները և դիրեկտիվներն աշխատանքի կազմակերպման, կանխավճարների բաժանման, արտադրության նորմաների և գնահատումների հարցերի վերաբերյալ և ստեղծել կոլխոզների ներսում բամբակի մշակման բարձր վորակի համար խթան հանդիսացող պայմաններ:*

3) *Առաջարկել կուսակցական բոլոր կազմակերպություններին և կոլխոզային սիստեմին* ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 25–Ն ԱՎԱՐՏԵԼ ՍԴԵԼՇՉԻՆԱՅԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՅԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՎՈՐՈՇՄԱՆ, ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՔԻ ԳՈՐԾԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ:

Նույն ժամանակամիջոցում ավարտել աշխատանքային պլանների կազմությունը ամառվա համար. կարգի դնել ամբողջ ինվենտարը. բրիգադներ և պատասխանատու ղեկավարներ նշանակել աշխատանքի տարբեր ճյուղերում և անցկացնել նրանց հատուկ նախապատրաստումը և հրահանգումը:

4) *Բամբակային կոլխոզներն ուղարկել առնվազն* 1000 *ուսանող, հատկապես խորհուրդների* 6–*րդ համագումարի վորոշումները բացատրելու, կոլխոզներին սդելշչինայի անցնելու գործում օգնելու, աշխատանքային պլաններ կազմելու և մշակման կամպանիան անցկացնելու համար: Ուշադրություն դարձնել մոբիլիզացիայի յենթարկվող ուսանողների կոնկրետ հրահանգման և նրանց ըստ վորակի խնամքով ընտրության վրա:*

5) *Առաջիկա տասնօրյակի ընթացքում ամեն մի ռայոնում անցկացնել ուսուցչության հավաքներ* 5—10 *օրով, հրահանգելով աշխատանքի կազմակերպման հարցերի և հաշվառքի վերաբերյալ, սդելշչինայի և աշխատանքի բրիգադային մեթոդի անցնելու ձևերի, սոցմրցման կազմակերպման, կանխավճարների բաշխման մեթոդների վերաբերյալ և այլն: Այդ հավաքներն անցկացնելու համար հանրապետությունների Կենտկոմները պատասխանատու աշխատավորներին ուղարկելու յեն ռայոնները:*

6) Հանրապետությունների կենտկոմները, Անդր․ Աշխժողկոմատը և Անդրկոլխոզկենտրոնը կանոնավորելու յեն դրսի աշխատանքների հարցը բամբակի բոլոր ռայոններում, մշակման կամպանիայի ժամանակաշրջանի համար, ելնելով բամբակի մշակումը բանվորական ուժով ապահովելու անհրաժեշտությունից:

7) Վորովհետև յայլաներ մեկնելը զգալի չափով անդրադառնում է բամբակի դաշտերի մշակման վորակի վրա, հետևապես նաև՝ բամբակի բերքատվության վրա, առաջարկել բամբակային ռայոնների, կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ, կոլխոզային և կոոպերատիվային կազմակերպություններին անմիջապես ծավալել բամբակաբույծների մեջ (թե՛ կոլխոզնիկների և թե՛ անհատական չքավոր-միջակ տնտեսների մեջ) լայն մասսայական աշխատանք՝ ամառվա ընթացքում աշխատանքներում նրանց ամրացնելու համար, ուղարկելով անասունները ամառվա յայլաները հասարակական հովիվների միջոցով:

8) Հաշվի առնելով կանանց աշխատանքի ունեցած բացառիկ նշանակությունը, անցկացնել մի շարք միջոցառումներ՝ կանանց աշխատանքն ավելի լրիվ չափով ներգրավելու համար, առաջին հերթին կոլխոզներում, և կանանց աշխատանքի պայմանները բարելավելու համար, կազմակերպելով հասարակական սնունդ, ծավալելով մսուրներ, մանկապարտեզներ և այլն: Հանրապետությունների ժողկոմխորհները և Անդրբամբակկոմն այդ նպատակների համար գտնելու յեն անմիջապես անհրաժեշտ միջոցներ:

9) Անդրհողժողկոմատը և Տրակտորկենտրոնը 5 որվա ընթացքում մշակելու յեն հացահատիկների բերքահավաքի կամպանիայի պլանը, նկատի ունենալով բանվորական ուժի մեծ քանակությունը, վոր անհրաժեշտ է բամբակի մշակման համար, վորի նպատակով բերքահավաքի կամպանիայի ժամանակ լրիվին օգտագործել ՄՏ կայանների տրակտորային պարկը և բերքահավաքի ինվենտարը: Ժամանակին բերել բերքահավաքի անհրաժեշտ մեքենաները և կալիչները:



10) Աչքի առաջ ունենալով, վոր բամբակի մի շարք ռայոններում մալյարիան զգալի թվով մարդկանց կտրում է աշխատանքից մշակման և բերքահավաքի կամպանիայի ամենալարված օրերին, առաջարկել հանրապետությունների առժողկոմատներին ապահովել այդ ռայոնները մինչև հունիսի մեկը բժշկական սպասարկումով և նախազգուշական միջոցառումներով:

Վրաստանի Առժողկոմատը և Կարմիր Խաչն անմիջապես կազմակերպելու յեն բժշկական օգնություն մալյարիայի յենթակա Ադրբեջանի բամբակի ռայոնների համար:

11) Անդրյերկկոմը պարտավորեցնում է Անդրկոլխոզ բամբակին և բամբակային սովխոզների դիրեկտորներին օրինակելի կերպով անցկացնել մշակման կամպանիան սովխոզներում, կազմակերպելով օգնություն շրջակա կոլխոզների և անհատական չքավոր-միջակ տնտեսությունների համար:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, սդելշչինայի գործադրությունը, սովխոզների բոլոր տեխնիկական հնարավորությունների օգտագործումը 100 տոկոսով և ինվենտարի անպատասխանատու օգտագործման վերացումը, սոցմրցման և հարվածայնության հետագա ծավալումը, աչքի ընկնող աշխատավորների պարգևատրումը— ԱՅՍ ԲՈԼՈՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԽՈԶՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ, ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՎԱԾ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

## III

1) Բամբակի դաշտերն ամառը ջրելու համար սահմանել հետևյալ ժամկետները. առաջին անգամ՝ հունիսի 5-ից մինչև 25-ը, յերկրորդ անգամ՝ հուլիսի մեկից մինչև օգոստոսի 15-ը:

Ամառը մի անգամ ջրվող ռայոններում (գլխավորապես Հյուսիսային Մուղանը)— հունիսի 25-ից մինչև հուլիսի 25-ը:

Հանձնարարել Հողժողկոմատին և Անդրբամբակկոմին տասն օրվա ընթացքում վորոշել և հրատարակել բամբակի դաշտերի ամառվա վոռոգման վերջնական ժամկետներն ամեն մի ռայոնի համար առանձին:

Ջրային միջոցները բամբակաբուծության կարիքների համար ռացիոնալ կերպով ոգտագործելու նպատակով, Անդրյերկկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին սահմանել ամենորյա սիստեմատիկ հսկողություն վոռոգման ռայոնական պլանների կատարման վրա, անմիջապես ծավալելով քաղաքական և կազմակերպչական աշխատանքներ հետևյալ լոզունգով՝ «Ջրի վոչ ռացիոնալ ոգտագործման համար վոչ մի լիտր ջուր»:

2) Հաստատել բամբակի մշակման հետևյալ հիմնական ժամկետները. առաջին քաղհանը, կուլտիվացիան և շարքերի մշակումը՝ մայիսի 20—25-ից մինչև հունիսի 10—15-ը:

Յերկրորդ քաղհանը, կուլտիվացիան և շարքերի մշակումը— հունիսի սկզբներից մինչև հուլիսի 10-ը:

Յերրորդ քաղհանը և կուլտիվացիան պետք է ավարտվեն հուլիսի 20-ից վոչ ուշ, յերկրորդ անգամ ջրելուց հետո:

Չորրորդ և հետագա քաղհանները՝ ամեն անգամ ջրելուց հետո:

Հանձնարարել Անդրհողժողկոմատին և Անդրբամբակկոմին հինգ որում ճշտություն մտցնել այդ ատանքների սկզբնավորման և վերջավորման մեջ և համապատասխան ցուցմունքներ տալ տեղերին:

3) Բոլոր ռայոններում անցկացնել բատրակ-չքավորական լայն կոնֆերենցիաներ մշակման կամպանիայի հիմնական հարցերի վերաբերյալ, մասսայական աշխատանքներ ծավալելով կանանց մեջ:



ՄՏ կայանների ագրոնոմիական աշխատամասերում կազմակերպել կոլխոզային լայն կոնֆերենցիաներ, իսկ ՄՏ կայաններին կից՝ հատուկ ժողովներ:

Հանձնարարել հանրապետությունների կենտկոմներին ռայկուսկոմներին հրահանգել այդ կոնֆերենցիաների զեկուցողներին:

4) Մայիսի 15-ից մինչև հունիսի 1-ը ծավալել մասսայական ագրոտեխնիկական արշավներ դեպի գյուղ. այդ գործի կազմակերպումը հանձնարարելով ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմին և հանրապետությունների կոմյերիտական կենտկոմներին:

5) Անդրպրոֆխորհուրդը, հանրապետական պրոֆխորհուրդները, ՄՏ կայանների բանվորների և սովխոզների բատրակների ու բանվորների պրոֆմիությունների ակտիվ մասնակցություն են ցույց տալու մշակման կամպանիային, մի շարք պատասխանատու աշխատավորների կցելու յեն բամբակի ռայոններին, ստորին պրոֆկազմակերպություններին ոգնելու համար և այլն:

6) Վրաստանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմներն անմիջապես բարելավելու յեն այդ հանրապետությունների բամբակային շրջանների թուրքական կոլխոզների սպասարկումը հրահանգիչներով և թուրքերեն լեզվով մասսայական գրականությամբ, կապված կոլխոզշարժման ու բամբակաբուծության հետ:

7) Կինո և ռադիո-կազմակերպությունները մասսայականացնելու յեն աշխատանքի կազմակերպման հարցերը և բամբակի մշակման կամպանիան անցկացնելու խնդիրը կոլխոզներում:

8) Անդրկովկասյան հանրապետական և ռայոնական բոլոր թերթերն անմիջապես սկսելու յեն լայն կամպանիա բամբակի ամառային մշակման հարցերի շուրջը, սիստեմատիկ կերպով լուսաբանելով այդ կամպանիայի ընթացքը: «Զարյա Վոստոկա»-ն դետեղելու յե տեսություններ մշակման կամպանիայի հանրապետական և շրջանային մամուլի մասնակցության մասին:

9) Հանձնարարել Անդրբամբակկոմին հատկացնել մի հատուկ ֆոնդ բարձր բերքատվություն ունեցող կոլխոզներին պարգևատրելու համար:

IV

1) Միանգամայն անթույլատրելի համարելով մի շարք շրջաններում դեմոբիլիզացիոն տրամադրությունները, կապված բամբակի ցանքի վերը մոտենալու հետ, Անդրյերկկոմն առաջարկում է բամբակային ռայոնների կուսակցական կազմակերպություններին անմիջապես սկսել ամենավճռական պայքար դեմոբիլիզացիոն տրամադրությունների դեմ, վորոնք արդյունք են մշակման կամպանիայի աջ-ոպորտունիստական թերագնահատման:

2) Մինչև հուլիսի 1-ը թողնել բամբակային ռայոններում այն աշխատավորներին, վորոնք ուղարկվել են կենտրոնական կոմիտեների և Անդրյերկկոմի կողմից ոգնելու տեղական կազմակերպություններին՝ բամբակի կամպանիան անցկացնելու գործում, փոխանցելով նրանց ուշադրությունը բամբակի մշակման կազմակերպության վրա:

Մշակման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում թողնել բամբակի Անդրհանրապետական և շրջանային ցանքային հանձնաժողովները, նրանց վրա դնելով այդ կամպանիայի անմիջական ոպերատիվ ղեկավարությունը:

Կուլակության պայքարը բամբակի դեմ պահանջում է կուսակցության և խորհրդային բոլոր կազմակերպություններից՝ ուժեղացնել դասակարգային աչալրջությունը մշակման կամպանիայի ժամանակ և ե՛լ ավելի համախմբել կոլխոզային և չքավոր-միջակ մասսաներին կուսակցության ղեկավարության տակ՝



կուլակության վրա վճռական հարձակում գործելու՝ կոլխոզային շարժումը ծավալելու և բամբակի բերքատվությունը բարձրացնելու առաջադրությունները լիովին կատարելու համար:

---

## 80.000 Ռ. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲԱՄԲԱԿԿՈՄԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1) Բամբակաբուծական կոլխոզների միջև հայտարարել համանդրկովկասյան մրցում բամբակի լավագույն բերքատվության համար:

Բերքատվության լավագույն նվաճումների համար կոլխոզների այս մրցման գծով պարգևատրման նպատակով հատկացնել Անդրբամբակկոմի միջոցներից 80·000 ռուբլի:

2) ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼ 4 ՊՐԵՄԻԱ

Առաջին պրեմիա—20·000 ռուբլի: Այս գումարը տրվելու յե այն կոլխոզին, վորը լիովին կատարած կլինի ցանքսի տարածության պլանը, ապահովելով յուրաքանչյուր հեկտարից 250 փութ բերք, վերջացնելով բերքահավաքը և բամբակի հանձնումը պետությանը մինչև 1931 թվի դեկտեմբերի 20-ը:

Յերկրորդ պրեմիա— 15·000 ռուբլի— հեկտարից 200 փութ բերքի համար:

Յերրորդ պրեմիա— 10·000 ռուբլի— հեկտարից 150 փութ բերքի համար:

Չորրորդ պրեմիա— 5·000 ռուբլի— հեկտարից 100 փութ բերքի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼ ՅԵՐԵՔ ՊՐԵՄԻԱ

Առաջին պրեմիա— 10·000 ռուբլի— հեկտարից 200 փութ բերքի համար:

Երկրորդ պրեմիա— 6·000 *ռուբլի— հեկտարից* 150 *փութ բերքի համար*:

Երրորդ պրեմիա— 4·000 *ռուբլի— հեկտարից* 100 *փութ բերքի համար*:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼ ԵՐԿՈՒ ՊՐԵՄԻԱ

Առաջին պրեմիա— 6·000 *ռուբլի— հեկտարից* 100 *փութ բերքի համար*:

Երկրորդ պրեմիա— 4·000 *ռուբլի— հեկտարից* 75 *փութ բերքի համար*:

3) *Համաանդրկովկասյան մրցումն իրագործելու համար կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով— Կուզնեցով (Անդրբամբակկոմ), Տոլպինցև (Անդրտրակտորկենտրոնից), Նադեժին (Անդրբամբակկոմից), Ոմարով (Անդրբամբակմիությունից), Յարոսլավսկի (Անդրկոլխոզկենտրոնից), Շեվչենկո («Զարյա Վոստոկա» թերթից)*:

*Առաջարկել այդ հանձնաժողովին՝ ծավալել լայն կամպանիա կոլխոզների մեջ, մրցման նպատակներն ու խնդիրները բացատրելու և բերքատվությունը բարձրացնելու համար մղվող պայքարի համաանդրկովկասյան մրցման մեջ նրանց մտցնելու առթիվ*:

*Անդրբամբակկոմի վարչության նախագահ՝*

ՏՈԼՍՏՈՊՅԱՏՈՎ

Гос. Библ.
ՀՀ Ազգային գրադարան
NL0289661

19.158

5 ԿՈՊ.

„ՋԱԿԿՆԻԳԱ"